

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

N	Օրենսդրական ակտի անվանումը	Նշումներ, ներկայացում
1.	<p>ՊՏ N44 (1224) Հունիսի 8, 2016թ.</p> <p><i>ՀՀ 12.05.2016թ. Օրենքը «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին</i></p> <p><i>Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը և տարածվում է վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և էլ.էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև 2015թ. Հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:</i></p>	<p>Օրենքում Եկամուտ չհամարվող տարրերի շարքում ավելացվում է նոր մաս՝</p> <p>Եկամուտ չեն համարվում վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող ինքնավար էներգաարտադրողների՝ էլ.էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում նշված անձին մատակարարված էլ.էներգիայի դիմաց էլ.էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները:</p> <p>Օրենքում Ծախսեր չհամարվող տարրերի շարքում ավելացվել է՝ ինքնավար էներգաարտադրողների կողմից էլ.էներգիայի արտադրության հետ կապված ծախսերը:</p> <p>Նշում . այս օրենքը, ինչպես նաև հաջորդ տողում ներկայացված՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունները կապված են նրա հետ, որ.</p> <ol style="list-style-type: none"> 1. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանվեց, որ կարգավորման ենթակա չեն բացառապես սեփական կարիքների համար, ինչպես նաև մինչև 150 կիլովատ դրվածքային հզորությամբ ինքնավար արտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը 2. «Հարկերի մասին» ՀՀ օրենքը սահմանեց, որ դա ձեռնարկատիրական գործունեությունն չէ 3. «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը սահմանեց պահանջ, որ Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի էլեկտրասպառման համակարգի անխափան աշխատանքի և գործունեության իրականացման անհրաժեշտ պայմաններն ապահովելու նպատակով էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձն ապահովում է էլեկտրական էներգիայի փոխհոսքերը:

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p>2.</p>	<p>ՊՏ N44 (1224) Հունիսի 8, 2016թ.</p> <p>ՀՀ 12.05.2016թ. Օրենքը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին</p> <p>Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը և ստարածվում է վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և էլ.էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև 2015թ. Հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:</p>	<p>Օրենքում նվազեցվող եկամուտների շարքին է արդեն դասվում՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի ստացած ֆինանսական հատուցումը, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողների կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները:</p> <p>Հարկվող օբյեկտի որոշման առանձնահատկությունների մեջ ավելացվել է դրույթ, համաձայն որի Ծախս չեն համարվում վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության հետ կապված ծախսերը:</p>
<p>3.</p>	<p>ՊՏ N44 (1224) Հունիսի 8, 2016թ.</p> <p>ՀՀ 12.05.2016թ. Օրենքը «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին</p>	<p>ԵՏՄ անդամ չհանդիսացող երկրներից ՀՀ՝ «բացթողում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է ապրանքի մաքսային արժեքի հիման վրա և պետ.բյուջե վճարվում՝ ներմուծելիս: Իսկ ԵՏՄ անդամ պետություններից նման ապրանքներ ներմուծելիս վճարը հաշվարկում է ներմուծողը՝ «Անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով որոշվող ԱԱՀ բազայի հիման վրա և պետ.բյուջե է վճարվում մինչև ապրանքը ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p><i>Օրենքն ուժի մեջ է մտնում 01.01.2017թ.-ից:</i></p>	
<p>4.</p>	<p>ՊՏ N44 (1224) հունիսի 8, 2016թ.</p> <p><i>ՀՀ օրենքը ՀՕ-76-Ն, ընդունված՝ 12.05.2016թ. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին»</i></p> <p><i>Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը՝ 18.06.2016թ-ին</i></p>	<p>Օրենքի ընդունմամբ երկարաձգվել է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր սոցիալական վճար կատարելու պարտավորությունից ժամանակավորապես հրաժարվելու հնարավորությունը՝ համապատասխան հոդվածներում 2017թ.-ը փոխարինելով 2018թ-ով:</p> <p>Այսպիսով, օրենքով նախատեսված համապատասխան խմբի աշխատողները, գործատուի միջոցով սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու վերաբերյալ դիմում ներկայացրած լինելու պարագայում կարող են այդ վճարը չկատարել մինչև 2018թ-ի հունիսի 1-ը:</p>
<p>5.</p>	<p>ԳՆԱՍ N14 (557) հունիսի 1, 2016թ.</p> <p><i>ՀՀ Կառ.առընթեր ՊԵԿ Նախագահի՝ 18.05.2016թ. N51-Ն Հրաման՝ «Հարկ վճարողի գործունեության կասեցումը տուգանքով փոխարինելու վերաբերյալ դիմումի ձևը հաստատելու մասին»</i></p>	<p>Հրամանի ընդունման համար հիմք է հանդիսացել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտման դեպքերում՝ հարկ վճարողի գործունեության կասեցումը կարող է փոխարինվել տուգանքի վճարմամբ: Գործունեության կասեցումը փոխարինվում է տուգանքով հարկ վճարողի գրավոր համապատասխան դիմումի և օրենքով սահմանված չափով հաշվարկվող տուգանքի վճարումը հաստատող փաստաթղթի (անդորրագրի) ներկայացման դեպքում:</p> <p>Այդ դիմումի ձևը օրենքի համաձայն պետք է սահմանվեր վերադաս հարկային մարմնի կողմից և ահա սահմանվել/հաստատվել է այս հրամանի հավելվածով:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p>Հրամանն ուժի մեջ է մտնում 01.09.2016թ. -ից:</p>	
<p>6.</p>	<p>ՊՏ N54 (1234) Հուլիսի 13, 2016թ.</p> <p>ՀՀ 17.06.2016թ. Օրենքը՝ «Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին</p> <p>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</p>	<p>Այսուհետ կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ կատարելիս կազմակերպությունների և ԱԶ-ների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ նաև հեռակա՝ էլեկտրոնային հաղորդակցություն ապահովող կապի կամ հեռուստատեսային խանութների միջոցով վաճառքի իրականացման դեպքում:</p>
<p>7.</p>	<p>ՊՏ N53 (1233) Հուլիսի 6, 2016թ.</p> <p>ՀՀ Կառավարության՝ 30.06.2016թ. N673-Ն Որոշում՝ «Ծանուցման ձևերը, ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանների վարման և հաշվառված անձանց տվյալների հրապարակման կարգը սահմանելու մասին»</p>	<p>Պահանջը բխում է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածից:</p> <p>Սահմանվում են՝</p> <ul style="list-style-type: none"> • ծանուցման ձևերը • ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանների վարման և հաշվառված անձանց տվյալների հրապարակման կարգը

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը՝ 07.07.2016թ-ից:</i></p>	
<p>8.</p>	<p>ՊՏ N54 (1234) Հուլիսի 13, 2016թ.</p> <p><i>ՀՀ 17.06.2016թ. Օրենքը՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	<p>«Մնանկության մասին» ՀՀ օրենքում մի շարք փոփոխություններ ու լրացումներ են մտցվել՝ հիմնականում կանխատեսվող սնանկության դեպքում պարտապանների՝ դատարան դիմելու, ինչպես նաև առողջացման ծրագրի հետ կապված առաջացած հարաբերությունների կարգավորման մասով: Այժմ պարտապանը կարող է դատարան ներկայացնել սնանկության վտանգի դիմում, որի քննության հատուկ կանոնները սահմանվում են «Մնանկության մասին» Օրենքի 21-րդ գլխով: Օրենքի 23.1 հոդվածով սահմանվել են նաև կառավարչի վարքագծի կանոնները, բացի այդ առանձին հոդվածներով սահմանվել են կառավարչի գործունեության կասեցման և լիազորությունների դադարեցման դեպքերը: Նախատեսվում է նաև ապահովված պարտատերերի իրավունքների ապահովում:</p>
<p>9.</p>	<p>ՊՏ N54 (1234) Հուլիսի 13, 2016թ.</p> <p><i>ՀՀ Օրենքը 17.06.2016թ.՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին:</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	<p>Օրենքի 93-րդ հոդվածում լրացում է կատարվել, համաձայն որի «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի իմաստով, խոշոր ընկերությունում ընկերության աուդիտն իրականացնող անձը կամ վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարքի կնքման որոշումն ընդունելուց հետո՝ մինչև պայմանագրի կնքումը, տալիս է եզրակացություն գործարքի՝ սույն օրենքի պահանջներին, ինչպես նաև շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ:</p> <p>Ի դեպ նույն ժամանակահատվածում վերստուգողը պարտավոր է գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը և վերոնշյալ եզրակացությունը հրապարակել ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական էլեկտրոնային կայքում:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p>10.</p>	<p>ՊՏ N54 (1234) հուլիսի 13, 2016թ. <i>ՀՀ Օրենքը ՀՕ-109-Ն, ընդունված՝ 17.06.2016թ.՝ «ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»</i> <i>Սույն Օրենքն ուժի մեջ է մտել պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը՝ 23.07.2016թ-ին և տարածվում է 01.04.2016թ.-ից հետո ծագած հարաբերությունների վրա:</i></p>	<p>Հաշվի առնելով ԼՂՀ սահմանին առկա ապրիլյան լարված դեպքերը՝ լրացում է կատարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդվածում, որը վերաբերում է պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար աշխատանքային պարտականությունների կատարումից ազատվելուն:</p> <p>Քննարկվող լրացմամբ աշխատողը, ով որպես կամավորական մասնակցում է ՀՀ, ինչպես նաև ՀՀ կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին, ազատվում է աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով աշխատատեղը (պաշտոնը):</p> <p>Գործատուի համար հիմքը համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից տրված՝ կամավորական համարվելու մասին տեղեկանքն է:</p> <p>Աշխատանքային պարտականությունների կատարումից ազատված ժամանակահատվածի համար աշխատողի վարձատրությունը որոշվում է կողմերի համաձայնությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով:</p>
<p>11.</p>	<p>ՊՏ N54 (1234) Հուլիսի 13, 2016թ. <i>ՀՀ ՀՕ-107-Ն, 17.06.2016թ.</i> <i>Օրենքը՝ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին</i> <i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը՝ 23.07.2016թ.</i></p>	<p>Օրենքի 9-րդ հոդվածը լրացվել է երեք պարբերություններով, որոնց համաձայն ԱԶ-ն իրավունք ունի մինչև պետական հաշվառումից դուրս գալու դիմում ներկայացնելը հարկային մարմին դիմում ներկայացնելու՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում անցնելու համար:</p> <p>Եթե նման դիմում չի ներկայացվում ԱԶ-ի կողմից, ապա հարկային մարմինն իրավունք ունի արդեն նախկինում ԱԶ հանդիսացած ֆիզիկական անձի մոտ իրականացնելու պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում՝ ԱԶ-ի պետական հաշվառումից դուրս գալու օրվան հաջորդող 3 տարիների ընթացքում:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p>12.</p>	<p>ՊՏ N56 (1236) Հուլիսի 27, 2016թ.</p> <p>ՀՀ օրենքը 29.06.2016թ.՝</p> <p>«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին</p> <p>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</p>	<p>Օրենքի 20-րդ հոդվածը «Այլ ծառայությունների կամ գործողություններ համար պետական տուրքի դրույքաչափերը», ավելացվել է ևս մեկ կետով, համաձայն որի երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական և ընդհանուր թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակը տալու համար ևս սահմանվում է պետական տուրք՝ բազային տուրքի հնգապատիկի չափով:</p>
<p>13.</p>	<p>ՊՏ N56 (1236) Հուլիսի 27, 2016թ.</p> <p>ՀՀ ՀՕ-136-Ն, ընդունված՝ 29.06.2016թ. Օրենքը՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին»</p> <p>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ 28.07.2016թ.</p>	<p>Խոսքը վերաբերում է ԱԱՀ-ից ազատմանը, երբ գործ ունենք սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող գործարքների հետ: Օրենքում սահմանվել է, որ եթե նշված ծրագրերն արժանացել են ՀՀ կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը, ապա այդ ծրագրի շրջանակներում կատարված գործարքները ազատվում են ԱԱՀ-ից:</p> <p>Մասնագիտական հանձնաժողովի գործունեության կարգը և կազմը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի և գործարքների՝ որպես արտոնյալ որակման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Այդպիսի կարգ դեռևս չի սահմանվել:</p> <p>Այս արտոնության կիրառման առումով նշումներ պետք է կատարվեն սուբսիդիաները, սուբվենցիաները և դրամաշնորհները տրամադրողների և նշված սուբսիդիաները, սուբվենցիաները և դրամաշնորհները ստացողների միջև կնքվող պայմանագրերում: Արտոնությունը գործում է մասնագիտական հանձնաժողովի կողմից Հայաստանի</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

		<p>Հանրապետության կառավարության սահմանած կարգով սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերն արտոնյալ որակելու մասին որոշման ընդունման պահից:</p>
<p>14.</p>	<p>ՊՏ N62 (1242) Օգոստոսի 12, 2016թ. <i>ՀՀ Կառավարության 29.07.2016թ. N821-Ն Որոշում՝ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառքի, ներմուծման, արտահանման, փոխադրման լիցենզավորման կարգը, հայտի ձևը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:</i></p>	<p>Հաստատվում է ԱՏԳ ԱԱ դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառքի, ներմուծման, արտահանման, փոխադրման լիցենզավորման կարգը, լիցենզիա ստանալու հայտի ձևը, լիցենզիայի ձևը:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p>15.</p>	<p>ՊՏ N63 (1243) օգոստոսի 17, 2016թ.</p> <p>ՀՀ Կառավարության 11.08.2016թ. N 827-Ն Որոշում՝ ՀՀ Կառավարության 12.05.2016թ. N493-Ն և N486-Ն որոշումների գործողությունները կասեցնելու մասին</p> <p>Որոշումն ուժի մեջ է մտել 18.08.2016թ-ին՝ պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:</p>	<p>Նախորդ կետում ներկայացված, ՀՀ կառավարության կողմից 12.05.2016թ-ին ընդունված երկու թիվ 486-Ն և 493-Ն որոշումների գործողությունները ժամանակավորապես դադարեցվել են:</p> <p>Մինչև որոշման ուժի մեջ մտնելը՝ 18.08.2016թ. օտարերկրացի աշխատողների համար գործատուին տրված աշխատանքի թույլտվությունները գործում են կասեցման ընթացքում և վերականգնումից հետո, բայց ոչ ավել, քան թույլտվության մեջ նշված ժամկետը:</p> <p>Օտարերկրացիները, որոնց համար մինչև 18.08.2016թ. արդեն ներկայացվել է դիմում՝ թույլտվություն ստանալու համար, կարող են աշխատել ՀՀ-ում՝ առանց աշխատանքի թույլտվության, իսկ ներկայացված դիմումները ենթակա են վերադարձման մինչև 23.08.2016թ.-ը:</p>
<p>16.</p>	<p>ՊՏ N64 (1244) Օգոստոսի 24, 2016թ.</p> <p>ՀՀ Կառավարության 18.08.2016թ. N 841-Ն որոշում՝</p> <p>ՀՀ Կառավարության 05.12.2013թ. N1364-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին</p> <p>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը և գործողությունը տարածվում է 01.07.2016թ. -ից հետո</p>	<p>«Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող և մատուցվող ծառայությունների (կատարվող աշխատանքների) հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը հաստատելու մասին» որոշման մեջ արվել են մի շարք փոփոխություններ, այդ թվում և հաշիվ ապրանքագրերի և տեղափոխման փաստաթղթերի նոր ձևեր են հաստատվել:</p> <p>Սահմանվում է նաև (որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով), որ հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման հատուկ ծրագրերի (բիլինգային համակարգեր) միջոցով հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում ՀՀ Կառ. 11.11.2010թ. N1504-Ն որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով՝ այն է՝ «Հարկային հաշիվների դուրս գրման, հարկային հաշիվների սերիայի և համարների գեներացման կարգերը հաստատելու մասին» որոշումը:</p>

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

*Ճագող հարաբերությունների վրա,
բացառությամբ սույն որոշման 1-ին
կետի 2-րդ ենթակետի, որն ուժի մեջ է
մտնում 01.10.2016թ.-ից:*

Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն: